

բայց այս լեռնաշղթային հարաւակողմէն սկսեալ կը պակսի նոյնը մինչեւ Տաւրոսի հիւսիսային ստորոտը, ուր Սենոնի Չիագեաց միջերկրական երեսահարթն ապացուցած է: Արեւելեան Ղարաբաղի Վերին-Սենոնը կ'ապացուցանէ թէ ծովը դէպ ի հիւսիս-արեւելք, դէպ ի հարաւան, երթալով կը խորունկնար:

Մերքին-Այգարդեկի ամէն կողմ հիւսիս, հիւսիս-արեւելք եւ հարաւակողմը՝ ախրող բեկուն (հատական) նկարագրին եւ անոր մէջ գորշածխոյ գանուելուն պատճառաւ՝ չափազանց հաւանական է թէ Երրորդակազմի (Tertiär) սկսելու ատեն կենդրոնական Հայաստան մեծ մասամբ ցամաք երկիր էր: Կարմիր աւազաքարերն ու քարազանգերը յայտնապէս օդահարութեան արդասիքներ են ցամաքի մը, որ երկար ժամանակ ծովու երեսէն վեր մնացած էր, եւ որուն ծայրամասերուն վրայ՝ Դելտայական ճահիճներուն մէջ ածուխներ կազմուեցան: Ժխտական շարժումը կը զուգակցի Մերքին-այգարդեկայինայն Յետախաղացութեան հետ, որ այնպէս նկարագրական է երկրահամախաղացային (Geosynclinale) երկրաբաժիններուն՝ յատկապէս Ալպեան դաւուրն համար: Այս ժամանակէն սկսեալ Երրորդակազմի ատեն Հայաստան ցամաքային կամ գոնէ ցամաքի մ'ափը գանուող երկրէ մը՝ դարձած եղած է մէկ մասն այն մեծ միջերկրական լրկահամախաղացային դաւուրն (Geosynclinalzone), որ Եւրոպայէ մինչեւ Ասիա կը տարածուի: Գրամմիտէի ծակաւ (Nummulites perforatus) քարացածին խաւերով սկսող՝ Ալպեան երկրահամախաղացային համար այնպէս բնորոշ Միջին-այգարդեկային Անդրխաղացութիւնն իւր ազդեցութիւնը գործած է Տիգրիսի աւազանին եւ Զագրոսի լեռնաշղթային մէջ: Յիշեալ խաւերը նստած են մեծաւ մասամբ Տուրոնի վրայ, տեղ տեղ նոյն իսկ Հնակենդանակի վրայ, եւ մեծանիստ, կարմրագոյն քարազանգերով կը սկսին:

Իրենց կենդանախումբը շատ ճոխ է: Այն ծովն, որուն մէջ իբր մըրսխաւ նստած են ասոնք, ապք էր, եւ մեծազանգուած ու բազմազան Դրամախեցեաց զարգացման համար նպաստաւոր էր: Պոնտական շրջանակին մէջ հրաբղխային գործունէութիւնը, որ կաւճի ժամանակ սկսած էր Հոսաքարերու եւ Շողաքարերու կազմութեամբ, իւր զագաթնակէտին հասած է Այգարդեկի ատեն: Հոմաքար-անդէսաքարերու եւ փաղիաքար-անդէսաքարերու հրաբղխոյ հոսանքներ, ինչպէս նաև նոյնպիսի հոսանքներ սեւակճերու եւ անոնց փխարներուն, տարածուած են ծովուն յատակին վրայ: Այն նստախաւ կրաքարային շերտերը, որոնք հրաբղխային քարերուն հետ փոխնիփոխն նստած են, շատ ցանցատ եւ աղքատին կենդանախումբ մը կը պարունակեն, որ՝ կենաց աննպաստաւոր պայմաններուն հետեւութեամբ՝ աճման արդեւքներ կը ցուցնէ: Վերին-Այգարդեկի ժամանակ Անտիտաւրոսեան ծայրամի իւր ազդեցութիւնը գործեց թէ Հարաւային Հայաստանի եւ թէ նաև Ղարաբաղի վրայ, այնպէս որ Հայաստանի նշանաւոր մէկ մասն անդամ մ'ալ ցամաք երկիր եղաւ: Վերին-Այգարդեկի Փիլշեան (Flysch) երեսահարթը ձկանց թեփերով եւ Գաղձակերպերով եւ համաժամանակեայ հրաբղխային գործունէութեան ճոխ նշաններով՝ բացորոշ կը տեսնուի հիւսիսակողման մէջ (Ախալցխայի եւ Կուրի աւազանները): Նուազ որոշ՝ Արեւմտեան Ղարաբաղի մէջ: Հիպսալայի (Hipsala) եւ Կըզեկի (Kisbeli) միջեւ Փիլշեան այս երեսահարթն անգամ մ'ալ երեւան կու գայ՝ Հայաստանի ծայրագոյն արեւմտակողմը:

Սակաւարդեկի սկիզբը Սամսէթական հին ցամաքախրուան իւր սահմանն այնչափ հեռուն տարածած էր որ բոլորովն կը բաժնէր իրարմէ կաւկասեան ծովը՝ իւր կենդրոնական Եւրոպայի եւ Արալական նկարագրաւ (Ախալցխոյ աւազանը) մէկ

կողմանէ, եւ միւս կողմանէ՝ Դարալագեազի բուստակրերը՝ իրենց մինչեւ Պարսկաստանի խորքերը շարունակուող կասաէլ-Գոմբերտոյեան (Castel-Gomberto) երեսահարթով: Ժովափնեայ Աքուիտանեան (Aquitain) նստախաւեր՝ ցամաքային բոյսերով՝ գանուած են այն ժամանակի հայկական երկրին եղբրը՝ Արղաճի մօտ (Արարատի հիւսիս-արեւմտակողմը) եւ Պլատանայի մօտ Սեւ ծովու վրայ: Ասոնք աղերաներ կը ցուցնեն Կիլիկեան Սակաւարդեկի հետ՝ վերջնոյս Սոցկայեան (Sotzka) երեսահարթով: Այն յետակաւարդեկային ծայրամը, որ Կիլիկիոյ մէջ կ'երեւայ, նաև Հիւսիսային Հայաստանի Սակաւարդեկային երկրամասը կը բարձրացուցած է. բայց կ'երեւայ թէ Դարալագեազի բուստակրին վրայ չէ կրցած ազդել, որովհետեւ վերջնոյս վրայ համալիր նստած է Մերքին-Նուազարդեակը:

Հայաստանի Նուազարդեակը կը սկսի ընդհանրապէս կոշտ քարազանգերու կազմութեամբ մը, որ այս երկրաբաժնիս մէջ ընդարձակագոյն Անդրխաղացութեան մը նշանն է: Ուրմիոյ եւ Մակուի (Արարատի հարաւարեւմտակողմը) հնակենդանական սարահարթները, որոնք Միջնակենդանականի (Mesozoikum) ժամանակ ցամաք կան էին, այս ատեն ընկղմած են մնացած էին, այս ատեն ընկղմած են Նուազարդեկային Միջերկրեայ ծովուն մէջ, որուն հիւսիսային ափն ալներեւ որոշուած է ծովափնեայ սկախաւերով այն Նորահողեան (Neokom) բարձանց ստորոտը, որոնք Եւրասոյ հիւսիսակողմէն՝ Միպիկորէ (Երզնկայի հիւսիսը) սկսեալ դէպ ի արեւելք կը տարածուին Բոփ լեռան վրայէն: Այն անաղարտութիւնը, զոր ամէն կողմ կը ցուցնեն Նուազարդեկային (Հելուեսական եւ Տորոնեան) Բուստակրերն ու Բարաթփակաց-կրերը, եւ դարձեալ գետաբեր (fluviatil) սկախաւերու պակսիլը, կ'ապացուցանեն թէ Անտիտաւրոսեան ծայրերը զրեթէ Հարթաղաշտի մը վերածուած էին հարթուելով: Վերին-Այգարդեկի եւ

Սակաւարդեկի լեսուրածին նստախաւերը յայտնապէս յառաջ եկած են այս երկրիս շրջանակին մէջ տեղի ունեցած սաստիկ լերկացմանէն (Denudation):

Մերքին-Տորոնեանէն անմիջապէս ետքը սկսած է Հայաստանի մէջ՝ Ալպեան լեռնաձայման հետ համաժամանակեայ ծայման շրջան մը, որ Նուազարդեկային կրերը ծալ ի ծալ ըրած է: Ծայման արգասիքն երկրին այլեւայլ մասերուն մէջ շատ տարբեր էր: Մինչդեռ արեւելակողմը շատ արագ էր: Նուազարդեակը մըրած Բայազետի քով Նուազարդեակը մըրած է ուղղահայեաց կեցած Դրամախեցեաց է կրերու վրայ⁹, արեւմտակողմը՝ Արաբկերի²² եւ Կըզեկի⁹⁵ (Kisbeli) քով նոյնը տակաւին հարկզոնական նստած է: Վերջին դէպքիս մէջ ծայման պակսիլը կրնար մեկնուիլ այն մէջ զանգուածին ցոյց տուած մեծ դիմադրութեամբ: Աւելի հարաւ՝ մէկ կողմանէ Տաւրոսեան Հաստարանին եւ միւս կողմանէ Ասորական հարթաստանին միջեւ սեղմուած Նուազարդեկային կրերը դարձեալ ծայրմ կը ցուցնեն. այսպէս՝ Բիլիսի, Արղնոյ եւ Մարտինի մօտ: Միջին-Նուազարդեկային այս ծայման հետ համաժամանակ կամ անկէ անմիջապէս ետքը՝ տեղի ունեցած են գերխարսխային (ultrabasisch) քարերու մեծազանգուածներխուժումներ (Intrusion), որոնք մեծազոյն մասամբ օձակձայցած են (serpentinisiert):

Սարմատական ժամանակաշրջանին մէջ հետզհետէ յառաջացող ցամաքացում տեղի ունեցած է, եւ անապատանման պայմաններ գերիշխող եղած են: Այս կըրակացութեան քարերուն եւ քարազանգերուն (յաճախ օձաքարային բազալթի մասերէ կազմուած) եւ կաւաքարերուն (շատ անգամ գաճի եւ քարազանգեմեծազանգուած խաւանխտերով): Յետոյ երեւան եկած են անոյշ ջրոյ լճեր, որինակի համար Պարսկաստանի մէջ Խոյի եւ Թաւրէթի մօտ: Ծայրումը շարունակուած է այս օտարաբուն Սարմատական ժամանա-

կաշրջանին ասեն: Արի՛հ՛ Խոյի մօտ այս շարքին մինչև անգամ երկու անհամարութիւններ (Discordanz) նկատած է: Այս տարիքն ունեցող խաւեր լայն դուռով մը տարածուած են Հարաւային եւ Հիւսիսային Հայաստանի մէջ՝ Հարաւակողմը՝ «զաճաբեր շարքը» (մասամբ Սակաւարդեակ) ամենաճիւղ մը կը կազմէ Զաղրոսի եւ Տաւրոսի ստորտար. հիւսիսակողմը՝ Սարմատական աստիճանը կը տարածուի հիւսիսային եզրալեռներէն մինչև Կաւկաս եւ Սեւ ծովէն մինչև Կասպից ծով: Մինչդեռ իւր խաւերը Կաւկասի հարաւային զարին վրայ դէպ ի հարաւ ծալած նստած են, զիմացը Թրիպլիթական շղթային մէջ դէպ ի հիւսիս ծալիծարուած են⁴¹: Ասոնց միջեւ Մեսիական Հաստարանին մէջ խաւերը կեցած են հորիզոնական եւ անխախտ:

Այս ժամանակաշրջանէն ետքը Հայաստանի մէջ նոր ծալում մը տեղի ունեցած է: Մարազայի եւ Աղեքսանդրոպոլի (Լեւինական) (եւ Թերեւս նաև Զոխի) Միջին-Բազմարդեակային լճական փխարները՝ Ողնայարաւորաց իրենց հետաքրքրական կենդանախմբով՝ հորիզոնական նստած են: Երկրին անընդհատ վերամուղ բարձրացումն ի վերջոյ հայկական բարձրաշխարհաց սարահարթային նկարագիր տուած է, եւ ասոր զուգընթաց էին մեծ հողաբաժիններու խորտակումն, բարձրացումն ու խորասուզումը: Այս երեւոյթը սխաճ էր Ներքին-Բազմարդեակի աստեղ: Եւ թէ նոյնը տակաւին չէ վերջացած՝ կապացուցանեն Փոսահողերու մէջ տեղի ունեցող սաստիկ երկրաշարժները^{42, 103}:

Յոլովարդեակի ծովալճային սկախաւերը շատ տարածուած են Կենդրոնական Սարահարթին վրայ: Ուլի-նիշ Բալ-նիշ (Dreissensia polymorpha) քարացածին պատեանները յաճախ խաւեր կը կազմեն: Նաև այս կրտսերազոյն կազմութիւնները ծալում մը չեն ցուցնիր. այլ կամ հորիզոնական նստած են, կամ 2—3⁰ հակած:

Ասոնք մեծ չափով ծածկուած են ընդարձակածաւալ հրաբխոյ ծածկոյթներով, որոնք կամ ձեղքերէն դուրս բղխած են եւ կամ հոսած ծաւալած են հսկայ հրաբուզիներէն (Արարատ, Արագած, Միխան, Միմրուտ, Սամար եւն) եւ աւելի փոքր՝ տողանաձեւ շարուած կոնալեռներէն (Սողանլու, Լ'աջա եւն): Տակաւին այսօր մնացած մեծ լճերուն մէկ մասն աղի է (Վանայ ծով, Խոզապինի լիճ եւն), միւս մասը՝ անոյշ ջրոյ (Սեւանայ, Զաղարլի լիճ եւն). բայց ասոնց եւ ոչ մէկն Ուլի-նիշ Բալ-նիշ (Dreissensia polymorpha) ունի. որով կը հետեւի թէ բնագիտական պայմաններուն մէջ փոփոխութիւն տեղի ունեցած է: Ինչպէս արդէն յիշեցինք՝ հրաբուզային վերջին հրաշնութիւնը (Նիւլրուա լեռան) տեղի ունեցած է 1441ին: Թոնարիկ այսօր ալ զեռ. ծծմբահան (Solfatare) գործունէութիւն ունի:

Արդէն յիշեցինք Սառնաշրջանի (Սառուցի ժամանակ) խառագոյն կլիման: Նորաքարային (neolitisch) քաղաքակրթական արտադրութիւններէն գտնուած են Կայծքարէ քերոց մը՝ Զոլաբուր (Tschalabur) գետոյն ափը՝ Կուիրիլայի մօտ. — Վանակասե (Obsidian) գործիքներու գործարան մը ծալիայի մօտ՝ Տփղիսի մօտերը. — կանաչ ծիրանաքարէ յղկուած տապար մը Նախիջևանի աղահանքներուն մէջ. — ցցասներ (Pfahlbauten, լճարնակաց ձողաշէն տներ) Խոզապին լճի ափը, եւն: Պղնձադարեան մնացորդներ գտած է Դր Մորգան⁷² Սամխէթի մէջ:

(Շարունակելի): Հ. Թ. Տ.



ՆԵՐՈՆ ԿԱՅՍԵՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՔԱՂԱՔԵ-ԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Դ. ՎԵՐՆԵՐ ՀՈՒՐ

(Շարունակութիւն):

2. Պարբեական պատերազմի մարտադադարի շրջանը:

Վերջին բանակցութիւններու (57/58ի ձմեռը) ի դերեւ ելլելէն եւ վիճական երկրին 58ի ամառը գէնքի ուժով գրաւուէն ետքը, ի սկզբան Հայաստանի նկատմամբ միմիայն հռոմէական քաղաքականութիւն մը հնարաւոր էր, այսինքն վերադարձ դէպի Աւգոստոսի ուղղութիւնը, որ Հռոմի կողմանէ նշանակուած հելլենական զոյնով իշխանաւորի մը միջոցով երկրին տիրապետութիւնը ապահովել կը ջանար: Ըստ այսմ ալ կայսրը 59ի դարնան անտիրական գահը՝ յանձնեց Հերովդեանց Կապադոկիական գծէն իշխանի մը, որուն տրուեցաւ՝ հայ արքայիկ մեծախառ՝ Տիգրան անունը: Տրդատի վերջին յարձակումն ետ մղելէ յետոյ Կորբուզին նոր արքան իր գահը բարձրացուց³⁹:

Արեւելեան սահմանին պաշտպանութեան նոր գրութիւնը երեք աստիճանի կը բաժնուէր: Առաջադիր եւ վտանգուած պարտաւոր էր կազմէր Հայաստանի թագաւորն որուն տրուած էր հռոմէական օգնական զուեղ մը. պաշտպանողական երկրորդ զօտին կը շրջադուէր վրաստանէ մինչև Կոմագենէ հռոմէական հին հողին վրայ հաստատուած հպատակ պետութիւններէ, որոնք այն միջոցին Հայաստանի կեցած ընդարձակուեցան. ասոնց թիկունքը կեցան արեւելեան բանակին հինգ լեգէոնները՝ այժմ միասնաբար ենթարկուած Կորբուզոնի վերին հրամանատարութեան, որ Դուրմիտս Կուադրատոսի անշուշտ նախորդ տարին տեղի ունեցած մահէն ետքը՝ Ասորիքի վարչութիւնն ալ իր ձեռքն ունէր եւ հիմայ կերչուպէս ալ Հռոմէական Արեւելքի առաջին նահանգին կուսակալ կը կարգուէր⁴⁰:

Հայաստանի ժողովրդեան մէջ տիրող տրամադրութեան եւ Արշակունի գահի-հետամուտին, որ երկարատեւ իշխանութեամբ

ժողովրդեան սէրը եւ վստահութիւնը շահած էր⁴¹. մշտատեւ մօտաւորութեան պատճառով, նոր թագաւորին դիրքը կարելի էր պահուիլ միմիայն բաւականաչափ ուժեղ հռոմէական զուեղ մը օգնական տարով անոր: Այս պատճառով Կորբուզոն իր պաշտպանութիւն թողուց 1000 լեգէոնական⁴², երեք օժանդակ զուեղ եւ 2 գումարտակ դաշնակցային այրուծի, ուրեմն ընդ ամէնը 3000 հռոմէական կիրթ զինուոր: Իր գնահատուած մօլթե այս բանակը բաւական ուժեղ էր գահը ներքին խռովութիւններու դէմ ապահովելու եւ պարթեական արշաւի մը պարագային՝ թագաւորին նախնական զօրավիզը դառնալու:

Հռոմէական բանակին այս առաջադասին ետեւը, որ իրանեան մշակոյթի հողին սահմանին կեց հաստատուած էր, եւ որուն առաջնորդն էր Հայաստանի թագաւորը, ընդարձակ կիսաշրջանակի մը վրայ կը զբաղուէր վերը յիշուած Հռոմի հպատակ տրութիւններու խումբը, որոնք իրենց աստիճանով կամ նուազ հելլենական մշակոյթով հռոմէական պետութեան հաւատարմութեան լաւագոյն գրաւական մը կը ներկայացնէին, լաւագոյն գրաւական մը կը ներկայացնէին, Սամոսսէ մինչև Եփրատ կը տարածուէր Կոմագենէի թագաւորութիւնը, որուն մայրաքաղաքին՝ Սամոսատի մօտ, Եգեոսիա տաճարը կը կարէր: Որովհետեւ նոյն ժամանակ գետը կը կարէր Կոմագեն պետութեան անմիջական երկիրը Կոմագենի հիւսիսէն սահմանակից Մելիտինէ նահանգին մէջ մինչև գետը կը յառաջանար, հանդին մէջ մինչև գետը կը յառաջանար, անոր համար ալ ճիշդ հոս՝ երկու աղբերաններու խառնուեցին մօտ 54ին ստեղծուած թագաւորութիւնը մինչև գետին Ծովքի թագաւորութիւնը մինչև գետին եւ արեւելեան եզրերը ընդարձակուած էր. եւ իր մէջը կը պարփակէր Արածանոյ ստորին հոսանքին լայնատարած հովիտը Տաւրոսին մինչև Անախուարոս⁴³. հոս կը թագաւորէր ասորի Սոյեմոս Եմեսացին:

Հիւսիսէն Մելիտինէի կը միանար նոյնպէս 54ին կազմուած Փոքր Հայքի թագաւորութիւնը: Հայաստանի հիւսիսային սահմանին եւ Սեւ Ծովու, Արեւի եւ վրական սահմանին միջեւ տարածուող երկիրը 37էն սկսած իբրև Պոնտական թագաւորութիւն

³⁹ Տակիտ. Տ. ժ. 26, ուր կարելի է գտնել նոր կարգադրութիւնը ամբողջութեամբ: Ժամանակակից կարգադրութեան մասին հմտ. Klio ժ. 6: ⁴⁰ Արդէն 58ի տշնան վեհանախ դեկաւորներուն կենտրոնական իւրեկիցները կը նշանակէ, որոնք մինչև Պարսից ծովը պիտի ընկերանային անոնց:

⁴¹ Տրդատ անունով Ալաններու յաղթող, կ'այլի հայ ժողովրդական երգերու մէջ, որոնք պատգործուած են Մ. Մորենայիէն: Տես Մարկուարտ ZDMG. 49, 639: ⁴² Նոյն կերպ կարգադրութիւն կազմ էր 3ին Բուսպրական պետութեան համար. տես վարը Գլ. Բ. 104: 4: ⁴³ Տես Լ. Հաուպարտ Armenien 511 յջ.: